8458

բոլոր յերկրների, միացեք

ԴՈՒՄ ՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԵՅԻ

ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(24 IX 1929 թ.)

ՀՍՍՌ ԳՐԱԴԱՐԱՆ Գ.Ս.Ս.Ռ.
1 100
ЗКП3(47-925
Կ-94
329.15/47

Վրաստանի (Բ) ԿԵԿ
1929 թ.

17.09.2013

Տպարան հրատ. ,,Զարիա Վոստոկայի''. Պատվ. 1820, Տիրաժ 500, Դլավլիտ 1512.

ЭКЗЕМПЛЯР
Ц-94
24 SEP 2006
09 DEC 2006

Վրաստանի կոմունիստական կուսակցության (բ) բոլոր կազմակերպություններին.

Իրագործելով ՀԿԿ (բ) կենտկոմի հուլիսյան (1928 թ.) դիմումը, Վրաստանի կոմկուսը ինքնաքննադատության ծավալման հիման վրա կատարեց դպրի աշխատանք կուսակցության և բանվոր դասակարգի լայն մասսաներին մասնակից դարձնելու այն պայքարին, որ մղվում է բացերի, բյուրոկրատական այլասերման, դասակարգային գծի խեղաթյուրման յերևույթների դեմ խորհրդային, պրոֆմիութենական և կուսակցական ապարատին որդանների մեջ:

Սակայն, քաղաքական կարճատեսություն կլիներ ասել, թե ինքնաքննադատությունը դարձել է աշխատան-

8458

քի ղեկավար սկզբունք Վրաստանի կոմկուսի բոլոր կազմակերպությունների մեջ։

Թույլ տեղերի ուժեղ ստուգումը հայտաբերեց մի շարք էական բացեր բոլշևիկյան ազգու ինքնաքննադատության ծավալման գործում, դասակարգային զծի խեղաթյուրման, աջ թեքման գործնական արտահայտությունների դեմ պայքարելու գործում։

Ինքնաքննադատության ճնշումը և ոպորտունիստական խեղաթյուրումները Կախեթիայի կազմակերպության գործնական աշխատանքում, ղեկավար կազմի մի մասի քայքայումը և գործնական ոպորտունիզմը Հարավ-Օսեթիայի կազմակերպության մեջ, Վրաստանի կառուցողների միության վերնախավի քայքայումը, ինքնաքննադատության ճնշումը Թբիլիսի կազմակերպության առանձին բջիջներում և այլն, և վերջապես Աջարիստանի այլանդակությունները, այս բոլոր երևույթները, որոնք հայտաբերվեցին վերջերս [illegible] զարգացման վո-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ում СССР
Ա. ԱՄ. Ա. Մյասնիկյանի անվան
43171.63

բոշումների իրագործումն ստուգման յենթարկելու հետևանքով, վկայում են դասակարգային զծի ամենաէոպիտ խեղաթյուրումների և քայքայման յերևույթների մասին կուսակցական կազմակերպությունների առանձին շերտերում, նույնիսկ ղեկավար կազմին պատկանող աշխատավորների մոտ։

Այս բոլոր դեպքերը կարող եյին տեղի ունենալ միայն սխալներն ու թերությունները ծածկելու և սվաղելու հետևանքով, միայն ինքնաքննադատության ճնշման հետևանքով, չը-կասկածելով, որ ինքնաքննադատությունը բանվոր դասակարգի ամենաուժեղ զենքն է սոցիալիզմի համար մղված պայքարում։

Աջարիստանում տեղի ունեցած այլասերման դեպքը լավագույն ապացույցն է այն բանի, թե ինչպես խնամիության, թաֆիայականության ինքնագոհության և անհեռանկար աշխատանքի հետևանքով՝ առանց պայ-

մաններ ստեղծելու, վորպեսզի աշխատավոր լայն մասսաներն իսկապես մասնակցեն թերությունների դեմ մղվող պայքարին՝ պրոլետարական դեմոկրատիայի և ինքնաքննադատության հիման վրա, կուսակցական կազմակերպության առանձին, նույնիսկ շատ պատասխանատու ղեկները յենթարկվում են քաղաքենչական ազդեցության, ծածկվում են բոլբոսով, հասնելով մինչև ուղղակի այլասերման և սոցիալական խորթ տարրերի հետ միացման: Այս խայտառակությունները հաճախ անհնար են մնացել տեղական կուսակազմակերպության կողմից:

Աջարիստանի «գործը» բացվեց միայն Վրաստանի ԿԿ (բ) կենտրոնական որգանների ջանքերով և Աջարիստանի նոր ղեկավարության աջակցությամբ: Սակայն անհրաժեշտ է ընդունել, վոր Բաթումում տեղի ունեցած խայտառակությունների հայտաբերման մեջ մենք անպայման ուշացել ենք:

Այս բոլոր անցքերը Վրաստանի կոմկուսի առաջ, վորպես մարտական խնդիր, դնում են մասսայական պրոլետարական ինքնաքննադատության հետագա ծավալումը:

Կուսակցական կազմակերպությունները պետք է համարձակ և վճռական կերպով առաջնորդ լինեն ինքնաքննադատության՝ աշխատավոր մասսաների ակտիվությունը դեպի սոցիալիստական շինարարության հունը ուղղելու նպատակով: Անհրաժեշտ է արմատապես վերակառուցել կուսակցական, պրոֆ., և խորհ. կազմակերպությունների շարքերը և աշխատանքի մեթոդները՝ պրոլետարական և կիսապրոլետարական մասսաների ակտիվությունը մոբիլիզացիայի յենթարկելու գծով:

Անհրաժեշտ է կուսակազմակերպությունների աշխատանքի ծանրության կենտրոնը տեղափոխել «մարդկանց ընտրության, փաստական իրագործումը ստուգելու վրա», ինքնաքննադատության սուր զենքը ուղղելով դա-

սակարգային գծի խեղաթյուրման, գործնական աշխատանքում աջ թեքման դեմ։

Յեթե նման խոշոր պրոլետարական կազմակերպության մեջ՝ ինչպես Բագվինը, կուսակցական լայն մասսաների ակտիվությունից ղեկավարության յետ մնալու հետևանքով՝ անցյալում տեղի ունեցավ ինքնաքննադատության ճնշում հին ղեկավարության կողմից, յեթե բոլշևիզմի նման միջնաբերդում, ինչպիսին է Լենինգրադի կազմակերպությունն առողջ և սոկուն կուսակցական ղեկավարությամբ, հնարավոր յեղավ ինքնաքննադատության ճնշման առանձին կոպիտ դեպքեր, ապա հեշտ է պատկերացնել, թե ինչպիսի պատասխանատվություն է ընկնում Վրաստանի ղեկավար կադրերի և ամբողջ կոմկուսի վրա, մեր ամբողջ աշխատանքը ռեկոնստրուկտիվ շրջանի խնդիրներին համապատասխան վերակառուցելու, ինքնաքննադատությունը մեր աշխատանքի հիմնական մեթոդը դարձնելու գործում։

Կուսակցության կենտրոնական խնդիրներից մեկը հանդիսանում է ինքնաքննադատության այնպիսի ծավալումը (առանց նայելու անձնավորությունների), քննադատություն թե վերից և թե վարից, վորը ապահովի ժամանակին հայտնաբերել կուսակցության դծից շեղվելու բոլոր փաստերը, աջ թեքման և հաշտվողականության յերևույթները, և մոբիլիզացիայի յենթարկի ամենալայն մասսաների ակտիվությունը յերկրի սոցիալիստական շինարարության խնդիրների շուրջը։

Վերակառուցման շրջանի խնդիրների լուծումը անհնար է առանց համարձակ և հետևողական կերպով մասսաներին սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու յերկրի կապիտալիստական տարրերի դեմ, պետապարատի բյուրոկրատական խեղաթյուրումների և շեղումների դեմ մղված պայքարին մասնակից դարձնելու։

Կուսակցությունն առաջին պլանի

վրա յե դրել անողոք ինքնաքննադատության լոզունգը, վորպեսզի այդ լոզունգը դարձնի մի գենք մասսաների ձեռքում պայքարելու կուսակցության գլխավոր գծի ամեն տեսակի խեղաթյուրումների դեմ։ Այս նպատակով անհրաժեշտ է բացառիկ ուշադրություն դարձնել բանվորների առաջքաշման վրա պրոլետարական պետության բոլոր որգաններում։ Բանվորների առաջքաշումը պրոլետարական դեմոկրատիայի կարևորագույն տարրն է։

Բանվորական կադրերի պատրաստության աշխատանքը, նրանց վճռական առաջքաշումը, հանդիսանում է Վրաստանի կոմկուսի մարտական խնդիրը։

Այս հարցում մենք անթույլատրելի կերպով յետ ենք մնում։

Պետք եհաղթահարել վոչ միայն պետական, այլև յերբեմն պրոֆեսիոնալ ու կուսակցական ապարատի առանձին ողակների անտարբերությունը և ընդդիմությունը։ Սա ավելի անհրաժեշտ է մանավանդ այժմ, յերբ մենք ձեռնարկում ենք խորհրդային ապարատի զտումը։

Վրաստանի կոմկուսի (բ) կենտրոնական կոմիտեն նշելով կուսակցական, պրոֆեսիոնալ և խորհրդային կազմակերպությունների անբավարար ուշադրությունը դեպի պետապարատի զտման նախապատրաստական աշխատանքի ծավալումը, բանվորական մասսաների թույլ մոբիլիզացիան զտման քաղաքական և գործնական հիմնական խնդիրների շուրջը, առաջարկում է կուսկազմակերպություններին ամենակարճ ժամանակում բեկում մտցնել զտման նախապատրաստական աշխատանքում, ուշադրությունը կենտրոնացնելով բանվորական մասսաների և ամենից առաջ մասսայական կազմակերպությունների և ստուգվող հիմնարկների ակտիվի առավելագույն մասնակցության վրա։

Խորհրդային ապարատի զտումը պետք և հանդիսանա կարևորագույն մի ողակ ինքնաքննադատության ծավալման, մեր ապարատների աշխա-

տանքում յեղած բոլոր փոքր ու մեծ բացերի հայտաբերման և մասսաներին աջ թեքման գործնական արտահայտությունների դեմ պայքարելու համար մոբիլիզացիայի յենթարկելու գործում:

Մի քանի կոմունիստներ ըստ եյության հակված են ժխտելու աջ թեքումը Վրաստանում, առարկելով, թե այստեղ չկան աջ թեքման ձևակերպված խումբ և ծրագիր:

Այդ ընկերները մոռանում են, որ աջ թեքումը բացի ծրագրից՝ ունի նաև իր գործնականը:

Մեր պետական և տնտեսական կազմակերպությունների ամբողջ սիստեմում հաճախ նկատվում են ոպորտունիստական բացահայտ խեղաթյուրումներ, որոնք հաճախ ծածկվում են «գործնական» նկատառումներով, և այդ խեղաթյուրումները վոչ միշտ ստանում են համապատասխան հակահարված: Մի շարք կազմակերպությունների որինակով կարելի յե հաստատել, որ առանձին աջ խեղաթյուրումները գործնական կյանքում վերածվում են հատուկ գծի, որը տարբերվում և կուսակցության հիմնական գծից:

Դրա համար աջ թեքման գործնական արտահայտությունների դեմ մղված պայքարը իդեոլոգիական պայքարի հետ միասին հանդիսանում և ոպորտունիզմի դեմ մղված պայքարի կարևորագույն մասը, սոցիալիզմի շինարարության տեմպի ուժեղացման անհրաժեշտ պայմանը:

Վրաստանի կոմկուսը վերջին ամիսների ընթացքում անողոք կերպով բաց արեց թերությունները, խոցերը և հիվանդոտ յերևույթները:

Դասակարգային թշնամիները և կուսակցության չարակամները կհրճվեն այդ փաստերի առթիվ:

Աջ և ձախ ոպորտունիստները և քաղքենիները խուճապի մեջ ընկած կխոսեն կուսակցության «բյուրոկրատացման», «պրեստիժի» կորստյան մասին, այդ փաստերի մեջ տեսնելով

կուսակցության հասցեին իրենց ա-
ված գրպարության ճշտությունը:

Զախջախիչ հակահարված տալով
կուսակցության բյուրոկրատական
տարրերին, վորոնք ցանկանում են
սահմանափակել ինքնաքննադատու-
թյունը, թերագնահատում են ինքնա-
քննադատության դերը, վորպես մի-
ջոց ներդրավելու բանվոր դասակար-
գի, բատրակության, չքավոր և մի-
ջակ լայն մասսաները սոցիալիստա-
կան շինարարության մեջ,—Վրաստա-
նի կոմկուսը միաժամանակ հարվածի
այն բոլորին, վորոնք փորձում են ոգ-
տագործել ինքնաքննադատությունը
կուսակցության և նրա դեկավար դե-
րի դեմ: —

Վրաստանի կոմկուսը հետագայում
ևս վճռականորեն մերկացնելու յե
աշխատանքի թերությունները, մոբի-
լիզացիայի յենթարկելով բանվորա-
կան և չքավոր ու միջակ մասսաներին
պայքարելու այդ թերությունների
դեմ:

Վրաստանի կոմկուսը կոչ է անում

կուսակցության անդամներին և բան-
վոր դասակարգի լայն մասսաներին
ուժեղացնել պայքարը կոնկրետ բաց-
երի և սխալների դեմ, պրոլետարական
ինքնաքննադատության ծանր մուր-
ճով հարվածել աջ թեքումը, պայ-
քարել կուլակի, նեպմանի, տերտերի,
մենասատուի և բյուրոկրատի դեմ, վո-
րոնք կատաղի դիմադրություն են
ցույց տալիս սոցիալիզմի շինարարու-
թյանը:

Այս նպատակով Վրաստանի կոմ-
կուսի կենտկոմը առաջարկում է.

1) Հանձնարարել ԿԿ (բ) մարզային,
շրջանային և գավառական կոմիտեներ-
ին՝ ստուգել ինքնաքննադատության
դրությունը և այդ տեսանկյունից
քննության առնել ներկա նամակը բը-
ջիջային ժողովներում, շրջանային և
գավառական ակտիվներում, ինչպես
և բանվորական ժողովներում:

2) Ինքնաքննադատության ծավալ-
ման գործին լայնորեն մասնակից
դարձնել մամուլը, բանթղթակցային
և պրոլետարական հասարակայնու-

թյունը, կոմբերիտական և այլ կազմակերպությունները: Անհրաժեշտ է, որ մեր մամուլը ավելի սերտորն կապվի բանթղթակիցների հետ, ժամանակին արձագանքի կուսակցության գծի բոլոր խեղաթյուրումների և ինքնաքննադատության ճնշման առթիվ:

3) Կուսակազմակերպությունները պետք է անողոք պայքար մղեն ինքնաքննադատության սահմանափակման և ճնշման կոնկրետ փաստերի, խնամիության, թաքֆայականության, կոմունիստների կենցաղային քայքայման, մասսաներից կտրվելու և սոցիալապես խորթ տարրերի հետ միանալու յերևույթների դեմ:

4) Մարզկոմներին, շրջկոմներին, գավկոմներին և ռայկոմներին՝ ձեռք առնել բոլոր միջոցները, որպեսզի բջիջներում շարունակվող գտումը, ինչպես և խորհրդ. ապարատի գտումը, անցկացնեն բանվորների լայն մասսաների ակտիվ մասնակցությամբ, ինքնաքննադատության հետագա ծավալման և խորացման հիման վրա:

43174-63

5) Ղեկավար կադրերի պատրաստության և վերապատրաստության աշխատանքը համարելով լիովին անբավարար՝ կուսակազմակերպությունները այդ աշխատանքը պետք է դարձնեն իրենց ուշադրության կենտրոնը: Կուսակցական, պրոֆեսիոնալ և խորհրդային կազմակերպությունները պետք է ծավալեն լայն աշխատանք համարձակ և վճռական կերպով առաջ քաշելու բանվորական կադրերին՝ պատրաստելու և վերապատրաստելու բանվորական ակտիվը:

Վրաստանի ԿԿ (բ) կենտկոմը հաստատ վստահություն է հայտնում, որ Վրաստանի կոմկուսը կուսակցության գլխավոր գծի հիման վրա համարձակ և վճռական կերպով կվերակառուցի իր շարքերը, որպեսզի բանվորների ու բատրակ-շքավոր մասսաների գլուխքն անցած առաջ գնա դեպի նոր հաղթանակներ սոցիալիզմի շինարարության ճակատում:

Բարձր պահենք պրոլետարական ինքնաքննադատության դրոշը:

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ ... СССР

Հետևենք կուսակցության հիմնական գծին, ամեն գույնի ոպորտունիզմի դեմ։

Հոգուտ կուսակցական շարքերի բոլշևիկյան յերկաթե դիսցիպլինայի։

Իրագործենք և դերազանցենք մեծ աշխատանքների հնգամյա ծրագիրը։

Արմատախիլ անենք կապիտալիզմը։

Բարձրացնենք աշխատանքի վորակը և ուժեղացնենք նրա թափը։

Մասսաների գլուխն անցած, ՀԿԿ (բ) լենինյան կենտկոմի դեկավարությամբ առաջ դեպի սոցիալիզմ։

Վրաստանի ԿԿ (բ) Կենտրոնական Կոմիտե

Վրաստան և գիտակցորեն հարկավոր է մոբենալ ինքնաքննադատության սուր-գման ուժեղացնել պայքարն աջ բեվերի դեմ. դա է պարտքն ամեն մի կուսակցականի.

ՎԿԿ (Բ) ԹԻՖՇՐՋԿՈՄԻ VII-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՋԵԿՈՒՑՈՒՄԸ 24/IX—29 Թ.

Սեպտեմբերի 27-ին, Թիֆլիսկոմի պլենումի 4-րդ նիստում ընկ. Լ. Գոգոբերիձեն զեկուցեց «Վ.Կ.Կ. (բ) կենտկոմի դիմումը Վրաստանի բոլոր կուսկազմակերպություններին» նյութի մասին: Զեկուցումից հետո պլենումը միաձայն ընդունեց հետևյալ բանաձևը.

Վ.Կ.Կ. (բ) Թիֆլիսի շրջանային կոմիտեյի ընդլայնած պլենումը լսելով և քննելով ընկ. Լ. Գոգոբերիձեյի զեկուցումը Վ.Կ.Կ. (բ) կենտկոմի դիմումի մասին, ջերմորեն վողջունում է Վ.Կ.Կ. (բ) կենտրոնական կոմիտեյին և գտնում, որ կենտկոմը բոլորովին ճիշտ կերպով է մատնանշել կուսկազմակերպությունների աշխատանքների թույլ կողմերը:

Կուսակցության գլխավոր գծի հիման վրա ռեկոնստրուկտիվ շրջանի բարդ պայմաններից բղխող մի շարք մարտական խնդիրների համար պետք

և մոբիլիզացիայի յենթարկել կուսակցական լայն մասսաներին։

Դիմումի մեջ ընդգծված ինքնաքննադատության ճնշման, կուսակցության դասակարգային գծի չեղման, աջ թեքման հայտնաբերման մոմենտները տեղ ունեն և Թիֆլիսի շրջանի կուսակցական, պրոֆեսիոնալ և տնտեսական որգանների առանձին խմբերում։

Թիֆլիսի Կոմիտեի ընդլայնած պլենումը հատկապես ընդգծում է կուսկազմակերպության աշխատանքի ուժեղացման անհրաժեշտությունը գյուղում. այնտեղ յերևան յեկող աջ թեքման կոնկրետ արտահայտության դեմ, ինչպես կուսակցական, նույնպես և խորհրդային, կոոպերատիվ և մյուս կազմակերպությունների աշխատանքների մեջ (կապ կուլակի հետ)։ Սոփլիս-Կավշիրի ցանցի աշխատանքում նկատվել են դասակարգային գծի աղավաղում, կոլտնտեսություններից կոմունիստների դուրս գալու դեպքեր, կալալային քաղաքականության աղավաղում, գյուղատնտեսական վարկերի սխալ բաշխում և այլն (Մանգլիս, Աղբուլաղ, Ծալկա, Լյուքսեմբուրգ, Բաշկիդեսի)։

Աջ, բաց ոպորտունիստական թեքումն անդրկովկասյան պայմաններում հանդես է գալիս քողարկված նացիոնալիզմով և չովինիզմով։

Թիֆլիսկոմի կուսկազմակերպության հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի դրանց դեմ ուժեղ պայքար մղել (Սոյուզխլեբի, աղյուսագործարանի, հացթուխների բջիջներ)։

Վորպես կենտրոնական խնդիրներից մեկը, Թիֆլիսի կուսշրջկոմը նշում է բանվորական կադրերի համարձակ և վճռական առաջ քաշման խնդիրը։ Պետապարատի մոտակա զտումը պետք է մաքսիմալ չափով ոգտագործել ապարատի բանվորականացման նպատակով։

Կուսակցության Թիֆլիսկոմի ընդլայնած պլենումն առաջարկում է.

1. Այս դիմումը քննության առնել կուսակցական և անկուսակցական

բանվորական ակտիվի, կոմյերիտական բջջային և լայն բանվորական ժողովներում։

2· Շրջանի կուսկազմակերպությունների պրոլետարական հասարակայնության ուշադրությունը հրավիրել այս խնդիրների վրա և վճռական պայքար տանել ինքնաքննադատության ճնշման և կենցաղային այլանդակությունների դեմ։ Ոգտագործելով շարունակվող կուսզտումը, անխնա հարվածել նման աղավաղումների ամեն մի դեպք։

3· Ծավալել մասսայական ինքնաքննադատությունը վերևից ներքև։ Բարձրացնել աշխատանքի վորակը, տեմպի ուժեղացումը և ղեկավար կուսորգանների դիրեկտիվներն ու վորոշումներն իրագործել։

4· Մոտ ժամանակում կատարել վճռական առաջքաշումներ բանվորներից, և ուղղել ղեկավար կուս·, պրոֆ·, խորհրդային և տնտեսական աշխատանքը։ Ղեկավար կազմի աշխատավորները 10 տոկոսով բանվորականացնել։

5· Մամուլը, պատի լրագրները, բանդյուղթղթակցային շարժումը պետք է մոբիլիզացիայի յենթարկվեն կուսակցական մասսայի և լայն պրոլետարական հասարակայնության կարծիքը կազմակերպել պատասխանատու խնդիրների շուրջը։ Ինքնաքննադատության ծավալման վճռական արշավով պետք է հարվածել աջ թեքման ամեն մի արտահայտություն թե տեսականում և թե գործնականում։

Թիֆլիսի շրջանային կուս· կազմակերպությունը կկարողանա վճռականորեն ջախջախել այն ոպորտունիստական աջ և «ձախ» ֆրազյորներին, վորոնք չեն կարող հասկանալ ինքնաքննադատության ճիշտ նշանակությունը և գնահատել այն՝ վորպես աշխատանքի բոլշևիկյան մեթոդ։

Վ.Կ.Կ (բ) կենտրոնական կոմիտեյի ուժեղ ղեկավարությամբ Թիֆլիսի շրջանային կուսկազմակերպությունը հավաքելով իր բոլոր ուժերը և բարձ-

բացնելով նրա տեմպն ու վորակը, առաջ կգնա սոցիալիստական շինարարության ուժեղացման ֆրոնտում՝

Բոլշևիկյան ինքնաքննադատությունը ծավալելու՝

Կուսակցության գլխավոր դծի, առանձնապես աջ ոպորտունիստական թեքումների դեմ պայքարելու։

Ցեկ կուսակցության լենինյան դծի ճիշտ, անշեղ ու հետևողականորեն տանելու համար։

Բա՛րձր պրոլետարական ինքնաքննադատության մարտական դրոշակը։

Վրաստանի կոմունիստական կուսակցության (բոլշևիկների) Թիֆլիսի շրջանային կոմիտե։

ՀՍՍՀ ԳԱ Գրադարան
Гос Библиотека
ՀՍՍՀ ԳԱ
ՀՀ Ազգային գրադարան
NL0191182